ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին, շաբաթի, Լիբանան մեկնեցին Հոգևոր Ճեմարանի դասախոսներ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և Պարգև Շահբազյանը, 1965—1966 ուսումնական տարվա համար ուսանողներ ընտրելու։

***

Սեպտեմբերի 10-ին, ուրբաթ, Հռոմ մեկնեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանը, որպես դիտորդ մասնակցելու Վատիկանի ժողովի երրորդ նստաշրջանին։

***

Սեպտեմբերի 12-ին, կիրակի, «Խաչվերաց»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։

Երեկոյան, ավանդական հանդիսությամբ կատարվեց Խաչվերացի մեծ թափորը, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

***

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։ Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ այցելեցին սիրիահայ մի խումբ զբոսաշրջիկներ։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և եկեղեցական հնությունների թանգարանում։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում ընդունել հյուրերին, որոնք մեկնեցին գոհ տպավորությամբ։

***

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ այցելեց Անգլիայի կուլտուրայի մինիստր տիկին Ջեննի Լին։ Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում, եկեղեցական հնությունների թանգարանում և ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։

***

Սեպտեմբերի 16-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ այցելեց Ֆրանսիա—ՍՍՌՄ ընկերակցության քարտուղար, գրող Ժան Գաղալբոն։

Նույն օրը Մայր Աթոռ այցելեցին նաև հայ ուխտավորներ Արգենտինայից և ԱՄՆ-ից, ինչպես նաև զբոսաշրջիկների խումբեր Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայից, Լեհաստանից, ԱՄՆ-ից, Դանիայից և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից։

Մայր Աթոռ այցելեց նաև բուլղարահայ երգի և պարի անսամբլը, որը համերգներով հանդես է գալիս Մայր Հայրենիքում։

Բոլոր հյուրերը եղան նաև Վեհափառ Հայրապետի մոտ։

***

Սեպտեմբերի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողպալյանը Լոնդոնում իր ուսանողական տարիների, ինչպես նաև իր այցելած սփյուռքահայ գաղութների ազգային-եկեղեցական կյանքի մասին, շեշտելով Ս. Էջմիածնի դերը սփյուռքահայ եկեղեցական կյանքի կազմակերպման աշխատանքներում։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Սեպտեմբերի 23-ին, հինգշաբթի, *որպես ուխտավոր Բուխարեստից Մայր Աթոռ ժամանեց ծանոթ մտավորական Հ. Ճ. Սիրունին։*

***

Սեպտեմբերի 26-ին, կիրակի, *«Տօն Վարագայ Սրբոյ Խաչի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և քարոզեց «Խաչ քո երկրպագի մեզ ապաւէն» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հոկտեմբերի 7-ին, հինգշաբթի, *Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերատեսչի և դասախոսական կազմի ուղեկցությամբ, միօրյա ուխտագնացություն կատարեցին դեպի Աշտարակի շրջանի Մուղնու Ս. Գևորգ, Հովհաննավանք և Սաղմոսավանք սրբավայրերը։*

***

Հոկտեմբերի 10-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մեսրոպ քահանա Բենլիյանը, որն ուխտավորաբար գտնվում է Մայր Աթոռում։ Պատարագիչ քահանա հայրը քարոզեց թարգմանիչ վարդապետների կյանքի և գործունեության շուրջ։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ լուսահոգի Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի մահվան քառասունքի առթիվ։

***

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ, *էջմիածնի շրջանի իր ընտրողների հետ հանդիպման առթիվ, Մայր Աթոռ այցելեց Սովետական Միության հերոս, հայ ժողովրդի պանծալի զավակ մարաջախտ Հ. Բաղրամյանը։ Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում և եկեղեցական հնություններիր թանգարանում։ Վեհափառ Հայրապետը և միաբանությունը Վեհարանում ջերմորեն ընդունեցին թանկագին հյուրին։*